

ԱՐՄ. ԹԱՄԱՋՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԱՅՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

1866 թ. նոյեմբերի 13-ին (հին տոմ. 1-ին)՝ թշնամական որոգայթներով շրջապատված Գ. Արովյանը, Թիֆլիսում, երեկոյան դուրս է գալիս տնից, և այլևս... չի վերադառնում:

Մեծ չէ նրա թողած ժառանգությունը, սակայն արժանի՝ ամենայն ուշադրության:

Ընդամենը 29 տարի ապրեց կովկասահայ ճանաչված մտավորական գործիչը, սակայն իր անջնջելի հետքը թողեց հայ մշակութային կյանքի վրա:

Հանուն առաջավոր գաղափարների, ազգի լուսավորության, ընդդեմ՝ խավարի ու հետամնացության, — ահա Գ. Արովյանի համեստ հավատամքը, որի համար նա հետապնդվում ու հալածվում է ոչ միայն ցարական դաժան ռեակցիայի, այլև «ներքին»՝ իր բացահայտ ու ծպտյալ թշնամիների կողմից:

Նա է հորինում հայոց պատմության առաջին աշխարհաբար դպրոցական դասագիրքը: Կղերական մթնոլորտում նա համառ պայքար է մղում նոր մանկավարժության հիմունքների համար: Նա իր երգ-եղանակներով մի նոր համ ու հոտ է բերում ազգային երաժշտությանը:

Դժբախտաբար մեր նոր սերունդը ծանոթ չէ այս խիստ հետաքրքրական, պատմական անձին, քանի որ մինչև այժմ նույնիսկ մի հոգված չի լույս տեսել նրա կյանքն ու գործունեությունը բնութագրող: Ահա թե ինչու այդ կյանքի շատ էջեր դեռևս ծածկված են խորհրդավորության քողով: Նրա մասին քիչ դրական բնութագրումներ չկան արևմտահայ մամուլի էջերում: Իսկ արևելահայ մամուլը, դաժան գրաքննության ահից՝ զրեթե քար լուծյուն է պահպանել «կասկածելի» անձի նկատմամբ:

«Մեծ հայրենասեր... բնական հանճար...», — այսպես է թեկուզ անհարկի որոշ գերազնահատումով) բնութագրված նա անանուն հեղինակի՝ «Կենսագրություն Գևորգայ Արովյանց» խորագրով գրքույկում, որը լույս է տեսել 1882 թ. Զմյուռնիայում, որպես հավելված «Արևելյան մամուլ» թերթի:

* * *

Գ. Արովյանը ծնվել է 1837 թ. նոր տոմ. մայիսի 1-ին, Գուգարաց լեռնաշխարհի Օձուն (այժմ Ուզունլար) գյուղում, գեղջուկ Կարապետի ընտանիքում:

Արտակարգ ուսումնատենչ էր գյուղական պատանի Գևորգը: Այդ զգացվում էր դեռևս Սանահինում, ուր Աբազ պապը նրան տարել, հանձնել էր դպրեվանքին: Շուտով բախտը ժպտում է Գևորգին: 1847 թ. Ներսես Աշտարակեցու օգնությամբ, նա փոխադրվում է Բիֆլիս, ուր փայլուն ընդունակություններ է ցույց տալիս. էքստերն քննությամբ երկու տարում ավարտում է Ներսիսյան դպրոցի հինգ տարվա դասընթացը:

«Խավարի թագավորության աշխարհից» դուրս կորզած պատանին, իր մարդկային շատ բարեմասնությունների, և հատկապես առաջադիմության համար՝ «սիրելի է դառնում թե իր դասատուներին, թե իր ընկերներին» (այս և հաջորդ մի քանի մեջբերումները, վերև հիշված՝ «Կենսագրություն» գրքույկից են)։

Երկու տարի անց, 1849 թ. կաթողիկոսի կողմից նա «ընտիր վկայականով» ուղարկվում է Մոսկվայի Հաղարյան ճեմարան՝ շարունակելու կրթությունը։ Նա այստեղ ևս, ամբողջ հինգ տարի, սովորում է գերազանց։ Հատկապես խորանում է հայոց պատմության և աշխարհագրական գիտությունների մեջ։ Թեև արդեն վատառողջ, նա վիթխարի աշխատասիրություն է հանգես բերում. «անարյուն ճպուռի պես գիշեր-ցերեկ կրկնապատկում է յուր ջանքերը», հիմնավորապես տիրապետելով՝ մանավանդ գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն լեզուները։

1854 թ. «օրինավոր վկայագրով» ավարտելով Հաղարյան ճեմարանը, Գ. Աբովյանը զինված գիտելիքների մեծ պաշարով, և տոգորված իր ժողովրդին օգտակար լինելու ձգտումով՝ վերադառնում է Թիֆլիս¹։

60-ական թթ. էր դա՝ ճորտատիրական իրավունքի վերացման նախօրյակին։ Ինչպես կայսրության բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը համակված էր դեպի լուսավորություն։ Թիֆլիսն էլ, որ ասիական-արհեստավորական ու համբյարական հետամնաց հայաշատ քաղաք էր՝ մեծ կարիք էր զգում եվրոպական կրթությամբ հայ գործիչների։

Հենց այդպիսիներից էր Գ. Աբովյանը, որին վիճակված էր ինը տարի ծանր պայմաններում ուսուցչություն անել Ներսիսյան դպրոցում, հավասար հաջողությամբ դասավանդելով՝ հայոց պատմություն, աշխարհագրություն, երգեցողություն, ռուսաց լեզու՝ ռուսական գիմնազիայում, հայոց լեզու՝ գիմնական վարժարանում։

Շուտով նա համոզվում է, որ հայոց պատմության դասավանդման վատ դրվածքի գլխավոր պատճառն այն է, որ աշակերտը մեծ կարիք ունի մատչելի դասագրքի։ Մի բան, որի մասին ինքը ոչ միայն երազել, այլև հոգացել էր դեռևս ճեմարանում. հնատիպ աղբյուրներ ձեռք բերելու համար, ամռան ամիսներին շատ զրկանքներ կրելով, նա շրջագայել է Ռուսաստանի հայաշատ վայրերում, Տաճկաստանում, Պարսկաստանում...

Ահա թե ինչու, «Կենսագրության» հեղինակը մեծ սիրով ու համակրանքով է խոսում հատկապես հայոց պատմության ուշացած ձեռնարկն ստեղծողի գոհաբերությունների մասին։ Նա «թողնում է յուր կենսական զվարճությունները, աշխարհքի փառք ու պատիվը, մեծ աստիճանի ձգտումն և իրան մասն ու բաժին է ընտրում հայոց ազգը, նվիրում է յուր անձը պատրաստական ծառա նորա պատմությանը և աշխարհագրությանը»։

Թիֆլիսում, ցերեկային հոգսերից հետո, գիշերները, լամպի աղոտ լույսի տակ, Գ. Աբովյանը ջերմեռանդ սիրով գրի է առնում իր վաղեմի բաղձանքը՝ «Համառոտություն հայոց պատմությանը»՝ հնագույն ժամանակներից մինչև Կիլիկյան թագավորության անկումը։

¹ Այդ ժամանակ, Նույնիսկ Քիշինևյան «աքսորից» նոր դաս առած Ներսես Աշտարակեցին Գ. Աբովյանի հայրենասիրության մասին նկատել է. «Անգամ հյուսիսի սառնամանիքը չի կարողացել սառուցանել նորա հայրենասիրական եռանդը»։

Դասագրքի նախաբանում խոսելով պատմական գիտության նշանակության մասին ընդհանրապես, ազգի պատմությանը և նրա ուսուցմանը գաղափարական-դաստիարակչական մեծ խորհուրդ և իմաստ է վերագրվում:

«Յուրաքանչյուր ազգ, իբրև մասն մարդկության,— ասված է առաջաբանում,— ունի և յուր անձնական հատկությունները, ուստի և յուրաքանչյուր ազգ, իրան լավ ճանաչելու համար, անշուշտ հարկավորություն ունի յուր պատմությունը մանրամասնաբար ուսանելու, որովհետև նորա մեջ յուր առանձնական կատարելությունքը և թերությունքը տեսնելով, ճշտությամբ կձանաչե իրան, և ըստ այնմ տնօրինե յուր ապագա կյանքը»:

Սույն մեջբերումը ցույց է տալիս, որ նոր դասագրքում ճիշտ լուսաբանելով պատմության առարկայի դերը ընդհանրապես, նրան տրվում է ազգային ինքնաճանաչման բնույթ, որպես միջոց՝ «տնօրինելու յուր ապագա կյանքը»:

Խորհրդանշական է նաև, որ աշխատությանը բնաբան է ընտրված՝ կրաված սրտից պոռթկած Խ. Աբովյանի հռչակավոր «Վերքից»:

«Պատմությունը» թեև խոր գիտական հիմունքների վրա չի հենված, սակայն գրված է հայրենասիրական ոգով և մի առաջընթաց քայլ էր իր նախորդների համեմատությամբ:

Աշխատությունը հենվում է մինչ 50-ականը հայագիտական նվաճումների և ազգային աղբյուրների վրա: Բ տարբերություն նախորդ ձեռնարկների խրթին, մանվածապատ լեզվի, այն օժտված է անպաճույճ լեզվով, նյութի պարզ ու հստակ կառուցմամբ և մատուցման մատչելիությամբ:

Այսպիսով, ստեղծվում է ոչ միայն ժամանակի հայ աշակերտության, այլև ընթերցող լայն շրջանների համար շատ մատչելի և շահեկան մի նորագույն ձեռնարկ:

Հեղինակը ակնհայտորեն արտահայտված ուսական կողմնորոշում ունի: Նրա շատ մտքերը կարծես այսօր լինեն դրված. նա գտնում է, որ Ռուսահայաստանն է այն միակ օրրանը, որտեղ պետք է ժողովվեն աշխարհով մեկ ցրված նրա որդիները («Համառոտություն», 1893, Թիֆլիս, էջ 269):

Հայ ժողովրդի ապագա զարգացումը նա անպայման կապում էր ուս ժողովրդի հետ. «Հայոց աշխարհի հյուսիսն ուսաց իշխանության տակ մտնելով՝ այնտեղի հայերի մտավոր և նյութական վիճակն բարելավանում է և նոցա որդիքը կրթվում են և լուսավորվում...» (նույն տեղում, էջ 270): Ապա ակնարկում է ակնկալած այն ժամանակներն ու «բարելավ հանգամանքները», որոնք «լավ ապագա են գուշակում Հայաստանի համար» (նույն տեղում, էջ 269):

Գ. Աբովյանը թեև բախտ չունեցավ իր կենդանության օրոք հրատարակված տեսնելու իր «Պատմությունը», սակայն ետմահու շորս հրատարակություն ունեցավ:

Մեր օրերում ևս այն չի կորցրել իր նշանակությունը: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը բարձր է գնահատել Գ. Աբովյանի աշխատությունը, որ այն «իր ժամանակի համար մեծ գործ էր» և «իր ծառայությունը մատուցեց իբրև առաջին դասագիրք հայոց պատմության դասավանդման համար հայոց միջնակարգ դպրոցում, մինչև այն ժամանակը, երբ հանդես կգար Ստեփանոս Պալասանյանը և նրա «Պատմություն հայոցը»:

Պարզվում է, որ երիտասարդ պատմաբանը մինչև իր անհայտացումը դեռ վերջակետ չէր դրել իր աշխատությանը: Ահա թե ինչու, նրա էջերում կարող էին

դեռևս մշակման կարոտ տողեր, մասնակի թերություններ մնալ: Չէ՞, որ ինչպես նրա եղբայր Բ. Աբովյանն է նկատում ներածականում՝ հեղինակը «անհայտացավ, կիսատ թողնելով իր ցանկալի ձեռնարկությունը», որի «հարկավորությունը շատ զգալի է մեր ազգային դպրոցներում»:

Գ. Աբովյանի դասագիրքը հաջողված է նաև մանկավարժական առումով: Այն գրված է ժամանակի դիդակտիկական պահանջների համաձայն, պահպանված են՝ ժամանակագրության, մատչելիության, հաջորդականության սկզբունքները:

Հետաքրքիր է նաև հետևյալ հանգամանքը: Նախքան բուն նյութի շարադրմանն անցնելը, հեղինակը նպատակահարմար է գտել աշակերտներին ծանոթացնել պատմական Հայաստանի աշխարհագրությանը, դրան հատկացնելով հատուկ գլուխ: Այնտեղ հակիրճ տեղեկություններ են հաղորդվում Հայաստանի սահմանների, լեռների, գետերի ու լճերի մասին: Մի առանձին գլուխ էլ հատկացված է Հայաստանի գավառներին ու նրանց նկարագրությանը: Դրանից հետո նոր միայն տրված է պատմական նյութը:

Այդպիսի մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ է: Ճիշտ է ոչ միայն այն պատճառով, որ անցած դարի 50—60-ական թթ. ժխական դպրոցներում Հայաստանի աշխարհագրությունը, որպես առանձին առարկա՝ գրեթե գոյություն չուներ, թեև աշակերտին աշխարհագրական տեղեկություններ շատ անհրաժեշտ էին: Նման մոտեցումը ճիշտ է նաև սկզբունքային տեսակետից: Դեռևս ինքը, Գ. Աբովյանն է ասել, որ «պատմությունը առանց աշխարհագրական տեղեկությանց հիմնավոր չի կարող լինել», անհասկանալի կլինի աշակերտին:

Հիշատակենք, որ Գ. Աբովյանը թողել է նաև՝ «Հայոց պատմությունը ընդարձակ» և «Հայաստանի աշխարհագրություն» ձեռագրերը, որոնց հետքերը, ցավոք, մեզ չհաջողվեց գտնել:

* * *

Իր ժամանակի առաջավոր գաղափարներով զինված Գ. Աբովյանի շուրջը Թիֆլիսում հետզհետե թշնամական մթնոլորտ է ստեղծվում: Չէ՞ որ դպրոցական տեսչության մեջ, ինչպես նաև հոգևոր իշխանությունների շրջանում կային անհատներ՝ նվիրված ցարական միապետության կարգերին, որոնց անգամ չէր զբաղեցնում երկրի սահմաններում ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված ազդահալած քաղաքականությունը:

Նոր հովերով տարված, նոր գաղափարներով զինված մի ձեմարանական, պայքարելով հանուն աշխարհիկ դպրոցի, ընդդեմ դպրոցական սխուլաստիկայի՝ չէր կարող աննկատ ու անպատիժ մնալ:

Այդ ժամանակ Գ. Աբովյանը, ինչպես նշվեց քիչ առաջ, հայոց լեզվի դասատուն էր Թիֆլիսի զինվորական վարժարանում: Տեսնելով հայ պատանիների սերն ու հետաքրքրությունը դեպի մայրենի լեզուն (որ ինքն էր «նախապես սեր զարթեցրել մանկանց մեջ»), նա տեսչից պահանջում է՝ ավելացնել հայոց լեզվի դասերը: Հայատյաց տեսուչն էլ, այդ «հանդուգն» պահանջի համար դասատու Գ. Աբովյանին, ոչ ավելի, ոչ պակաս... ազատում է աշխատանքից:

Նրա նկատմամբ ավելի թունալի, լարված մթնոլորտ էր ստեղծված «հարազատ» ներսիսյան դպրոցում: Այստեղ աշակերտի առաջադիմությամբ շահագրգռված դասատուն, սուր քննադատում է իրենց դարն ապրած, հնացած

ծրագրերն ու մեթոդները, և պահանջում՝ աշակերտին ավելի շատ ճշգրիտ գիտելիքներ սովորեցնել: Իսկ երբ հարց է դնում, որ «Աշխարհացույցներ են հարկավոր Հայաստանի մասին», տեսուչ Փոնգոնին այդ դուր չի գալիս, ու նա ոչ թե հայերեն, այլ ռուսերեն ծաղրանքով ասում է. «Ի՞նչ Հայաստան, ի՞նչ բան»:

Տեսուչը Գ. Աբովյանին նաև «արգելում է դպրոցում ազգային երգ երգելու իբրև վտանգավոր»: Նրան մեղադրում են նաև այն բանում, որ «ազատ մտքեր է տարածում աշակերտաց մեջ հայոց պատմության դասի ժամին»:

Նորավարտ ճեմարանականին «լավ դաս տալու» համար, թե ներսիսյանում, թե ռուսական գիմնազիայում առաջարկում են՝ դու ուսուցչական ցենզ չունես, աշխատանքից պիտի հեռանաս կամ քննություն հանձնես:

Հազարյան ճեմարանականին հեշտ չէր «զինաթափելը», ուստի աներկյուղ ընդունում է «մարտահրավերը»: Նա երկու տեղում էլ այնպիսի փայլուն քննություն է տալիս, որ հարկադրված, դրական վկայագիր են տալիս. «որ Աբովյանը կարող է համարձակ ուսուցչություն անել կայսերական դպրոցներում»: Բայց միևնույն է, ցարական ռեակցիայի երգվյալ պաշտպանների՝ Գ. Աբովյանի թշնամիների և հակառակորդների բանսարկություններն ու զրպարտությունները չեն դադարում, այլ ավելի ու ավելի սուր բնույթ ընդունելով, ի վերջո այստեղից նույնպես նրան... ազատում են աշխատանքից:

Ծանր ապրումներով ու դառնություններով լի, Գ. Աբովյանը իր արձակման պատմությունն է սկսում գրել, «իբրև բողոք՝ ներկայացնելու հասարակաց դատաստանին»: Բողոքում նա շատ անողորմ երկացնում է վայ-մանկավարժների գաղափարական սնանկությունը, սակայն... ապարդյուն:

«Կենսագրություն» գրքույկը որոշ չափով լույս է սփռում պատմաբան-մանկավարժի դավանանքի և նրա անհայտացման սոցիալ-քաղաքական շարժառիթների վրա, որ ցավոք, մինչև օրս մնացել են չլուսաբանված, չպարզաբանված:

Բնորոշ է, որ ճեմարանական տարիներին Գ. Աբովյանը շփման ու սերտ կապերի մեջ է լինում Մոսկվայի ու Նոր Նախիջևանի հայ և ռուս մտավորականների հետ: Այս ծանոթություններն, ինչ խոսք, հետագայում իրենց ազդեցությունն են ունենում նրա աշխարհայացքի ձևավորման վրա և օգնում ու օժանդակում են նրան՝ առաջավոր գիտությունների վրա խարսխելու իր իմացությունները: Գ. Աբովյանը նաև «առաջնորդ է բռնում իրան այն բարեմիտ և գիտնական անձանց», որոնք թեև պաշտոնապես գործ չեն ունենում ճեմարանի հետ, սակայն «բացում են իրենց դռները և օգնում հայ պատանիներին առանձնապես հառաջանալու»: Իսկ Թիֆլիսում ուսուցիչ եղած ժամանակ, ըստ նույն անանուն հեղինակի՝ «օտարազգի բարեմիտ գիտնական հայրենասիրաց հետ սերտ կապակցություն է շարունակում, որոնցից շատերն արդեն հուժաստան են աքսորված» (հուժաստան նշանակում էր Սիբիր):

Ակնարկը միանգամայն պարզ է. խոսքը վերաբերում է Ռուսաստանից Սիբիր աքսորված նարոդնիկների հետ Գ. Աբովյանի «սերտ կապակցությանը»:

Հետագայում ռուս նշանավոր գրող և հրապարակախոս Ն. Գ. Զերնիշևսկին, Աստրախանում պատմել է հայերին, թե ինքը Սիբիրում աքսորված ժամանակ տեսել և ծանոթացել է նրանց հայրենակից Աբովյանին: Սակայն ո՞ր Աբովյանին՝ հաշատուրի՞ն, թե՞ Գեորգին:

Որովհետև Գ. Աբովյանի անձն ու գործը այն ժամանակ լայն ճանաչում չեն ունեցել, հետևապես Զերնիշևսկու ակնարկած Աբովյանին նույնացրել են

Խ. Աբովյանի հետ. մինչդեռ ավելի տրամաբանականն այն է, որ այդ անձնավորությունը կարող էր Գևորգ Աբովյանը լինել: Այդ դեպքում, այն լեզենդը, թե Խ. Աբովյանի գերեզմանը գտնվում է Ախոտսկում՝ նույնպես պետք է վերաբերվի Գ. Աբովյանին, որ երևի աքսորվել է Հեռավոր արևելք, և այնտեղ էլ վախճանվել ու թաղվել:

Այս հարցերը հանգամանորեն քննարկելով և հիպոթեզելով «հօգուտ» Գ. Աբովյանի է լուծում պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, իր՝ «Աքսորվածը Աբովյանի հաշատուրն էր, թե՛ Գևորգը» արժեքավոր ուսումնասիրությունում (տե՛ս «Պրոլետար», 1938 թ., № 7, Թիֆլիս): Ի դեպ, դա առաջին ծանրակշիռ տպագիր խոսքն է ասված հայ պատմաբան-մանկավարժի մասին:

Գ. Աբովյանի անհայտացման մասին, մի ուշագրավ փաստի մասին են սերնդե-սերունդ խոսել նրա մոտիկ ազգականները... որ նա դպրոցից միշտ տուն է եկել հուզված, մինչև որ նրան... ազատում են աշխատանքից: Մի իրիկուն էլ, ժանդարմը Աբովյանենց տուն է գալիս Գևորգի ետևից: Նա գնում է մոր մոտ, թողնում արծաթե գոտին. ես հիմա կգամ, ասում է, ու այլևս չի վերադառնում:

Գ. Աբովյանի անհայտացման՝ մի վարկած ևս:

— Ասածս կատարված դեպք է: Թիֆլիսում, փողոցում, — մեր մի զրույցի ժամանակ պատմեց ճանաչված պատմաբան Մորուս Հասրաթյանը, — Գ. Աբովյանը անզգույշ, խիստ բացասական արտահայտություն է ունեցել ցարական իշխանության դեմ, և մատնվել է, իսկ մի քանի օր հետո նա... անհայտանում է:

...Հայտնի է, որ Քանաքեռի և Օձունի Աբովյանները, տոհմային հեռավոր կապեր ունեն, այցելել են իրար: Իսկ «քանաքեռցի պատանի հաշատուրը, — շուրթե-շուրթ պատմում են ուզուկարցի տարեց Աբովյանները, — արձակուրդներին ներսիսյան դպրոց գնալ-գալիս, մեր պապերի օջախում է իջևանել»:

Մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի նման, Գ. Աբովյանը ևս ասպարեզից հեռացավ կյանքի բարդ հանգամանքներում՝ հալածվելով ցարական իշխանությունների և հայ կղերի կողմից:

Երկու Աբովյանների ողբերգական ճակատագրերի ինչպիսի՞ նմանություններ:

...Վերջապես, հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանից հետո, Գ. Աբովյանը հայ մտավորական դեմքերից երկրորդն էր, որ քաղաքական մեղադրանքով աքսորվեց Սիբիր, ուր և մեռավ անհայտության մեջ:

* * *

Հետաքրքրական է, որ Գ. Աբովյանի դավանանքը պարզելիս, ամենից շատ կարող է օգնել նրա, որպես ժամանակին ճանաչված... երգահանի ստեղծագործության հետ թեկուզ թուլցիկ ծանոթությունը:

60-ական թթ. կարևոր ժամանակաշրջան էր կովկասահայ մտավորականության կյանքում, երբ համեմատաբար առաջադիմական հոսանք էին կազմում ազգային-պահպանողականները:

Թեև մեր ձեռքի տակ չկան անհրաժեշտ փաստարկներ, սակայն առանց տարակուսելու կարելի է ասել, որ Գ. Աբովյանը, որպես ամեն նորի ու առաջավորի ջատագով, հարած կլինեք ազգային-պահպանողականներին:

Հետաքրքրական է, որ գաղափարական այդ կողմնորոշումը ամենից ցատուն արտահայտվում է նրա, որպես ժամանակին անուն հանած... երգահանի՝ ստեղծագործություններում:

Այդ՝ համեմատաբար առաջադիմական հոսանքին հարողները, ելնելով ազգային ինքնապահպանության շահերից, հետաքրքրություն են ցույց տալիս դեպի հայ կուլտուրայի ժողովրդական աղբյուրները: «Որպես նմուշ կարելի է հիշատակել ազգային երգերի եղանակավորման շուրջը վաթսունական թթ. տարված աշխատանքը» — կարդում ենք ականավոր գիտնական Աշ. Հովհաննիսյանի՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատությունում (2-րդ հատ., էջ 50—51): Դրվատելով այդ բնագավառում Գևորգ Աբովյանի ունեցած գործունեությունը, Ա. Երիցյանը գրում է, թե նա «...ինչքան կարելի է մոտենում է մեր շարականներուն, էտու համար, — հարում է Երիցյանը, — շնորհակալ ինք Աբովյանեմեն, ուր իր շինած խազերու ձենիրը մի շարականեմեն է առնում... Մինք խորհուրդ կուտանք ամեն մի խաղեր շինողներուն, վուր ձենիրը մի շարականներեն վիր առնին, շունքի համ համով ին, համ հարուստ, համ էլ մոտիկ ին իտալացվոց» («Մեղու Հայաստանի», 1863, № 5, եր. 49):

Խոսքը վերաբերում է 1860-ական թթ. սկզբներին Թիֆլիսում մեծ հաջողությամբ բեմ հանված՝ «Շուշանիկ» ազգային առաջին պատմա-ողբերգական պիեսին, որի հաջողությունը մեծապես պայմանավորված էր նրա երաժշտությամբ: Իսկ երաժշտությունը հորինել էր Գ. Աբովյանը:

Այդ տարիներին Գ. Սունդուկյանի, Պ. Պռոշյանի և ուրիշների հետ միասին, Գ. Աբովյանը ևս գործուն մասնակցություն է ունենում Թիֆլիսում նոր կազմավորվող հայ թատերական ու երաժշտական կյանքին: Պ. Պռոշյանը իր հուշերում նրան դասում է «Հայ թատրոնի գլխավոր գործիչների» շարքում:

Երգահան Աբովյանը հորինել է նաև ուրիշ պիեսների երաժշտություն, որոնց նոտաներից մի օրինակ հասել է մեզ:

Այդ մասին «Ակնարկ հայ երաժշտության պատմության» գրքում ասված է. «Ուշադրության արժանի է նաև «Հայկական թատրոնի երգեր» փոքրիկ ժողովածուի հրատարակումը Թիֆլիսում, 1863 թ., որը պարունակում է Գ. Աբովյանի երգերը»: Նոտան ունի ջերմ գրված առաջաբան — հանձնարարական:

Գ. Աբովյանն իրեն պրոֆեսիոնալ երաժիշտ չէր համարում, թեև կովկասահայ մամուլը բարձր է գնահատել նրա կատարած գործի դերն ու նշանակությունը: Նա «մարդկանց սրտերում հայրենասիրություն և ազգային ինքնաճանաչություն զարթնեցնելու նպատակով միայն» հորինում է՝ ազգային երգեր, պիեսների երաժշտություն, մշակում՝ շարականներ:

Վարպետորեն օգտագործելով եվրոպական նշանավոր երաժիշտների ըստեղծագործությունները, ինչպես և արևելյան մեղեդիները, տաղերը, մուխամբազները, տեղական շիքյաստիներն ու բայաթիները, նա «...ստեղծում է եվրոպա-ասիական ներդաշնակ երաժշտություն: Ահա թե ինչու այդ երաժշտությունն առանձին ընդունելություն է գտնում ոչ միայն երաժշտության սիրահար եվրոպացիների, այլև թառ ու քյամանչայով սքանչալից Թիֆլիսի հասարակության կողմից: Ամենակարճ ժամանակում տարածվում են այդ երգերը Թիֆլիսի սալոններում: Սազանդարները հարսանիքներում ու խնջույքներում այդ եղանակներն են հնչեցնում, նույնիսկ իտալական խումբը սկսում է թատրոնում այդ երգերը նվագել ու երգել» («Ռուսահայ թատրոնի պատմություն», Վենետիկ, 1933, էջ 474—475):

Գ. Աբովյանն ունենում է իր երգչախումբը, որի ձոխ ծրագրերում տեղ էին գտնում նաև իրեն՝ խմբավար-երգահանի մեներգներն ու խմբերգերը: Հաճախ էլ նա ինքն էր որպես մենակատար հանգես գալիս (չէ՞ որ նա շատ գուրեկան ձայն ուներ):

Երգահանի լայն տարածում գտած երգերից հիշենք՝ «Է՛ր հեռանաս քո մայրենի աշխարհիցը», որը ժամանակին կովկասահայ ընտանիքներում շատ սիրված ու տարածված էր:

Գ. Աբովյանի հայրենաշունչ երաժշտությունը, թեև հեռու է այսօրվա պրոֆեսիոնալ բարձր մակարդակից, սակայն տոգորված լինելով ազգային երանգով, ժամանակին այն միայն հայ հասարակությանը չի հուզել, և դաստիարակչական մեծ դեր է կատարել:

Մանկավարժ-պատմաբանը իր համեստ, բայց մշտական տեղն ունի նաև հայ առաջին երգահանների ընտանիքում:

Այսպիսով, մանկավարժ ու պատմաբան, երգահան ու հասարակական գործիչ Գևորգ Աբովյանի՝ պատմական այդ ուշագրավ անձն մեր աչքերի առաջ հառնում է որպես XIX դարի երկրորդ կեսի կովկասահայ առաջադեմ մտավորականության ցայտուն կերպար: